ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

**Բրյուսել, 2008թ. հունվարի 31**

**5723/08**

**EDUC 29**
**SOC 46**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| հեղինակ: | Coreper (Մաս 1) |
| ում: | Խորհրդին |
| նախորդ փաստ. No: | 5585/08 EDUC 24 SOC 46 |
| Թեման: | Խորհրդի և Հանձնաժողովի 2008թ. նախնական համատեղ զեկույցը՝ «Կրթություն և Ուսուցում 2010» աշխատանքային ծրագրի իրագործման վերաբերյալ, «Ցկյանս ուսումնառության իրականացում գիտելիքի, ստեղծարարության և նորարարության համար», Ընդունումը |

Հավելվածին կցված նախնական զեկույցը արժանացել է բոլոր պատվիրակությունների ու Հանձնաժողովի հավանությանը և ներկայացվել է Խորհրդի ընդունմանը:

## 1. ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կրթությունն ու ուսուցումը ունեն առանցքային կարևորություն տնտեսական և սոցիալական փոփոխությունների համար: Ավելի շատ և ավելի լավ աշխատանքներ ձեռք բերելու համար պահանջվող ճկունությունն ու անվտանգությունը կախված է այն երաշխիքից, որ բոլոր քաղաքացիները ձեռք կբերեն գլխավոր կարողություններ և կկատարելագործեն իրենց հմտությունները ողջ կյանքի ընթացքում[1]: Ցկյանս ուսումնառությունը օժանդակում է ստեղծարարությանն ու նորարարությանը և լիարժեք տնտեսական ու սոցիալական մասնակցության հնարավորություն տալիս:

Ահա թե ինչու Խորհուրդը իր առջև դրել է փառասիրական նպատակներ Կրթություն և Ուսուցում 2010թ. աշխատանքային ծրագրում: Վերջիններս իրենց հերթին խթանում են աշխատանքների և աճի համար Լիսաբոնի ուղենիշների իրագործմանը: Այս նպատակներին կարելի է հասնել միայն երկարատև ջանքերի շնորհիվ: Հակառակ դեպքում գործընթացը կլինի անարդյունավետ: Կարևոր է հատկորոշել ձեռքբերումները, և ջանքերը կենտրոնացնել այն հատվածների վրա, որոնց պատճառով Խորհուրդն ու Հանձնաժողովը պատրաստում են համատեղ զեկույց ամեն երկրորդ տարին մեկ:

Երրորդ Համատեղ Զեկույցը[2] մատնանշում է էական առաջընթաց և մարտահրավերներ կրթության ու ուսուցման բարեփոխումներում: Տվյալ հատվածները հատուկ ջանքերի կարիք կունենան.

- Հմտության մակարդակների բարձրացում: Հմտության ցածր մակարդակներով մարդիկ տնտեսական և սոցիալական բացառման ռիսկ են ներկայացնում: Դպրոցը վաղ լքելու, աշխատողների ու ցածր մակարդակի հմտություններ ունեցողների՝ ցկյանս ուսումնառությանը պասիվ մասնակցության, և վերաբնակիչների հմտությունների թերի ձեռքբերումների ընթացիկ բարձր մակարդակները անհանգստության տեղիք են տալիս շատ երկրներում: Ավելին, ապագայի աշխատաշուկաները գիտելիքահեն տնտեսությունում կպահանջեն հմտությունների նույնիսկ ավելի բարձր մակարդակներ խույս տվող աշխատուժից: Ցածր մակարդակի հմտությունները կդառնան ավելի մեծ մարտահրավեր,

---

1 Հանձնաժողովի Զեկույցը՝ «Ընդառաջ դեպի ճկունության և Անվտանգության Սկզբունքներ. ավելի շատ ու ավելի լավ աշխատանքներ ճկունության ու անվտանգության միջոցով», COM (2007) 359

2 Հաշվետվությունը հիմնականում հիմնված է ցուցիչների և նշաձողերի շարքին ուղղված կատարողականության և ազգային հաշվետվությունների վերլուծության վրա: Տե՛ս Հավելված 2-ը և SEC (2007) 1284 «Կրթության և ուսուցման ոլորտում Լիսաբոնի նպատակներին ուղղված առաջընթացը: Ցուցիչներ և նշաձողեր 2007»: Այն նաև կիրառում է կրթության և ուսուցման ոլորտում համակարգման բաց մեթոդի արդյունքները, հատկապես ԵՄ հենքային գործիքների օգտագործումը, և հավասար ուսումնառությունը, որը աջակցում է անդամ պետությունների բարեփոխումներին և փորձի նմանատիպ փոխանակումներին, որը Կոպենհագենի և Բոլոնիայի գործընթացների մի մասն է կազմում: Առաջին Զեկույցի համար տե՛ս Խորհրդի փաստ. 6905/04 EDUC 43, երկրորդ Զեկույցի համար՝ OJ C 79, 1.4.2006, էջ 1

- Ցկյանս ուսումնառության ռազմավարություններ: Շատ երկրներ առաջընթաց են գրանցել միասնական և համակցված ռազմավարությունների սահմանման գործում: Այսպիսի շրջանակներում առաջընթացը ակնհայտ է նախադպրոցական կրթությունում, որակավորումների շրջանակներում և ոչ ֆորմալ ու ինֆորմալ ուսումնառության վավերացման մեջ: Սակայն շատ երկրներ դեռ խուսափում են ուսումնառության համար նոր գործընկերություններից, բարձր որակի համար տևական ֆինանսավորումից, էֆեկտիվ ու անաչառ կրթությունից ու ուսուցումից[3]. սա է ներդրումների աճի դանդաղեցման պատճառը: Առանձնահատուկ ուշադրություն պետք է նաև դարձնել ցկյանս ուղղորդման վրա: Այդ բարեփոխումների արդյունավետ իրականացման երաշխավորումը կարևոր մարտահրավեր է ամեն ինչին,
- Գիտելիքային եռանկյուն (կրթություն, հետազոտություն և նորարարություն): Գիտելիքային եռանկյունը ունի գլխավոր դերակատարություն աշխատանքներին ու աճին խթանելու գործում: Ուստի շատ կարևոր է արագացնել բարեփոխումները, օժանդակել բարձրագույն կրթության և համալսարան-գործարարություն գործընկերությունների բարձր որակին և երաշխավորել, որ կրթության և ուսուցման բոլոր ճյուղերը ունեն իրենց լիարժեք դերակատարությունը ստեղծարարությանն ու նորարարությանը նպաստելու մեջ:

## 2. ԱՌԱՋԸՆԹԱՑ Է ԳՐԱՆՑՎԵԼ ՈՐՈՇ ՀԱՏՎԱԾՆԵՐՈՒՄ

Եվրոպան առաջընթաց է գրանցել որոշ հատվածներում: Սա չի նշանակում, որ առաջընթացը մշտական է կամ կարելի է գործողությունները դադարեցնել: Բարեփոխման քայլը դեռ համարվում է գլխավոր մարտահրավեր: Սակայն հետևյալ հատվածներում շատ երկրներ իրականացրել են բարեփոխումներ կամ գտնվում են այդ գործընթացի մեջ:

### **2.1.** Ցկյանս ուսումնառության ռազմավարություններ և որակավորումների համակարգեր

<u>Ցկյանս ուսումնառության ճշգրիտ ռազմավարությունները,</u>[4] որոնք սահմանել են ազգային քաղաքականության գերակայությունները և այն, թե ինչ կապ ունեն տարբեր ճյուղերը միմյանց հետ, մշակվել են երկրների մեծամասնության կողմից:[5]

---

[3] Հանձնաժողովի Զեկույցը՝ «Եվրոպական կրթության ու ուսուցման համակարգում արդյունավետություն և անաչառություն» COM (2006) 481

[4] Խորհուրդը համաձայնության եկավ, որ անդամ պետությունները պետք է ունենան կապակցված և համապարփակ ցկյանս ուսումնառության ռազմավարություններ մինչև 2006թ. (Ցկյանս ուսումնառության վերաբերյալ Խորհրդի 2002թ. հունիսի որոշում, 2004թ. Համատեղ Զեկույց և 2005թ. Եվրոպական Գարնանային Խորհուրդ):

[5] Տե՛ս Հավելված 1

Սրանցից շատերը միավորում են ցկյանս ուսումնառության համապարփակ տեսիլը՝ ներգրավելով կրթության և ուսուցման բոլոր տեսակներն ու մակադակները: Նրանց մի մասը, սակայն, կենտրոնանում է ֆորմալ կրթության և ուսուցման համակարգերի կամ շարունակական ցկյանս ուսումնառության ուրույն փուլերի զարգացման վրա:

Նկատելի է, որ կրթության և ուսուցման քաղաքականությունների ակներևության հիմքը ուժեղացվում է[6]: Սա անհրաժեշտ է համակարգերի համընդհանուր կապակցվածության և ռեսուրսների օպտիմալ բաշխման համար: Ուսումնառության ճկուն ուղիների խթանմանը և որոշ երկրներում համակարգի տարբեր հատվածների միջև անցումին տրվող առաջնահերթությունը նույնպես ուժեղացնում է կապակցվածությունը:

*Որակավորումների շրջանակներ և ոչ ֆորմալ ու ինֆորմալ ուսումնառության վավերացում*

Որակավորումների ազգային շրջանակները, որոնք կապված են ցկյանս ուսումնառության Որակավորումների Եվրոպական Շրջանակի հաստատման հետ[7], մշակվում են շատ երկրներում[8]: Դրանց հետ նոր կենտրոնացում է առաջանում ուսումնառության արդյունքների վրա:

Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացման համակարգերը, չնայած ավելի դանդաղ, բայց նույնպես մշակվում են[9]: Մարտահրավերը այժմ որակավորումների ազգային համակարգերում փորձարկումից լիարժեք կիրառության անցնելն է՝ ներառյալ բարձրագույն կրթություն և ցածր մակարդակի հմտություններ ունեցող ու տարեց կամ գործազուրկ մարդկանց՝ կրթության և ուսուցման որակավորումներ ստանալու հնարավորության կատարելագործումը:

| |
|---|
| Պորտուգալիայում Կարողությունների Ճանաչման, Վավերացման և Վկայագրման Կենտրոնների (ԿՃՎՎ) համազգային ցանցը հաստատվել է 2000թ.: Ներկայումս մոտավորապես 250,000 մեծահասակներ են անցնում վավերացման գործընթացի միջով: Կենտրոնները ապահովում են որոշ որակավորումների կարողությունների գնահատմամբ և վավերացմամբ: Վկայագրման գործընթացը ներառում է քննություն արտաքին ժյուրիի կողմից և լրացուցիչ ուսուցում, եթե հարկ կա: |

## Նախադպրոցական կրթություն

6 Բելգիան, Գերմանիան, Էստոնիան, Հունաստանը, Հունգարիան, Միացյալ Թագավորությունը, Բուլղարիան, Կիպրոսը, Իսպանիան, Իռլանդիան, Թուրքիան ներկայացնում են դա որպես նախապայման իրենց ռազմավարությունների համար: Տե՛ս նաև SEC (2007) 1098 «Ընդառաջ դեպի ավելի գիտելիքահեն քաղաքականություն և փորձ կրթության ու ուսուցման ոլորտում»:

7 COM (2006) 479

8 Տե՛ս Հավելված 1-ը

9 Տե՛ս Հավելված 1-ը

Նախադպրոցական կրթության կարևորությունը աստիճանաբար ճանաչվում է Եվրոպայում: Նրա՝ և՛ արդյունավետությանը, և՛ անաչառությանը նպաստելու հնարավորությունը արտացոլվում է նոր մոտեցումների և քաղաքականությունների մշակման մեջ: Դասավանդման ծավալների վերանայումը[10], ուսուցիչների շնորհալիության մակարդակի սահմանումը[11], նախադպրոցական մակարդակում գտնվողների մոտ պարտադիր հանրակրթական կրթության պրոպագանդման ընդլայնումը[12], որակի գնահատումներն[13] ու ներդրման ծավալների ընդարձակումը (օրինակ դպրոցներում անձնակազմի թվաքանակի մեծացման միջոցով[14]) աստիճանաբար գտնում են իրենց ուրույն տեղը:

Որոշ երկրներում մշակվել են հաջող թռիչքային ծրագրեր և սխեմաներ: Մարտահրավերը այժմ թռիչքային գործողությունների միջոցով դեպի ընդհանրացված իրագործմանը գնալն է, որին օժանդակում են ներդրումները, մասնավորապես որակյալ անձնակազմի համար:

| |
|---|
| 2000 և 2005թթ. միջև 4 տարեկան երեխաների մասնակցությունը կրթությանը ԵՄ 27-ում աճել է մոտ 3տոկոսով և հասել մինչև 85%-ի[15]: |

## 2.3. Բարձրագույն Կրթություն. ուրույն տեղ Լիսաբոնի օրակարգում

Բարձրագույն կրթության արդիականացումը ունի առանցքային նշանակություն գիտելիքային եռանկյունու և Լիսաբոնի ռազմավարության համար: Ղեկավարման, ֆինանսավորման և գրավչության խնդիրները արժանացել են ծայրահեղ ուշադրության եվրոպական ու ազգային մակարդակներով: Վերջիններս համալրում են Բոլոնիայի բարեփոխումները:

Շոշափելի առաջընթաց է գրանցվել համալսարանների ինքնավարությունը մեծացնելու գործում: Սա իր մեջ ներառում է ավելի լայն ծավալների ֆինանսական ինքնավարություն և հաշվետվության

10 Գերմանիա, Դանիա, Հունաստան
11 Չեխիայի Հանրապետություն
12 Կիպրոս, Դանիա, Հունաստան, Լեհաստան
13 Իսպանիա, Լիտվա, Խորվաթիա, Նորվեգիա
14 Ավստրիա, Բելգիա, Կիպրոս, Գերմանիա, Դանիա, Հունաստան, Իսպանիա, Հունգարիա, Մալթա, Նիդեռլանդներ, Լեհաստան, Շվեդիա, Սլովակիա, Միացյալ Թագավորություն, Խորվաթիա, Իսլանդիա, Նորվեգիա
15 Տե՛ս Հավելված 2-ը

նոր մեխանիզմներ: Շահագրգիռ կողմերի ներգրավման նոր տեսակներ են փորձարկվում մասնավորապես բարձրագույն ուսումնական հաստատությունների կառավարման, ինչպես նաև ուսումնական պլանների մշակման[16] կամ ուսումնառության արդյունքները սահմանելու[17] հետ կապված աշխատանքներում:

| |
|---|
| Կրթության հարցերով զբաղվող խումբը համալսարանների արդիականացման լավագույն փորձի վերաբերյալ համառոտ ձեռնարկ է մշակում բարձրագույն քաղաքականություն մշակողների և լայն հասարակության համար: |

## 2.4. Կրթությունը և ուսուցումը ԵՄ քաղաքականության ավելի լայն համատեքստում

Անդամ պետությունների գերակշռող մեծամասնությունը մեծ կարևորություն է տալիս կրթության, ուսուցման և հմտությունների զարգացմանը իրենց՝ 2005-2008թթ. Լիսաբոնի Ազգային Բարեփոխումների Ծրագրերում: Սա խոսում է նրանց՝ աճի և աշխատանքների ամբողջացված ուղենիշների իրագործմանը էապես նպաստելու մասին:

Մեծ առաջընթաց է գրանցվել նաև գործառութային ծրագրերը կառուցվածքային ֆինանսավորման ներքո «Կրթություն և Ուսուցում 2010» աշխատանքային ծրագրի գերակայություններին կապակցելու գործում: Վերջինս հատկապես ակնհայտ է դառնում համաձայնեցված ցուցիչների և նշաձողերի հատվածներին արձագանքելու ժամանակ:

Առաջընթաց է նկատվում նաև բարեփոխումներին օժանդակելու համար եվրոպական հենքային գործիքների մշակման գործում: 2006-2007թթ. Եվրոպական Կառավարությունը և Խորհուրդը գլխավոր կարողությունների, շարժունության որակի, բարձրագույն կրթության որակի ապահովման բնագավառներում առաջարկներ ընդունեցին և համաձայնության եկան Որակավորումների Եվրոպական Շրջանակի շուրջ:

Ընդհանուր առմամբ Հանձնաժողովը և անդամ պետությունները էական հաջողության են հասել 2004-2006թթ. Լեզուների Գործողության Պլանի[18] մեջ հայտարարված գործողությունների իրագործման մեջ:

16 Կիպրոս
17 Բուլղարիա, Լյուքսեմբուրգ, Շվեդիա, Թուրքիա
18 Հանձնաժողովի Աշխատանքային Փաստաթուղթ, «Օժանդակում լեզվի ուսուցմանը և լեզվաբանական բազմազանությանը 2004-2006թթ.» գործողության պլանի իրագործման վերաբերյալ հաշվետվություն, COM (2007) 554 վերջնական/2

## 3. ՈԼՈՐՏՆԵՐ, ՈՐՏԵՂ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ ԴԵՌԵՎՍ ԱՆԲԱՎԱՐԱՐ Է

### 3.1. Ցկյանս ուսումնառության իրագործում

Իրագործումը դեռևս ամենամեծ մարտահրավերն է ցկյանս ուսումնառության ռազմավարությունների համար: Այն ինստիտուցիոնալ պարտականությունների ավելի ճշգրիտ կատարման, համակարգման և բոլոր շահագրգիռ կողմերի հետ գործընկերության կարիք ունի: Տևական ջանքերը կարող են մտադրությունները վերափոխել քաղաքականությունների, որոնք էլ, իրենց հերթին կապահովեն արդյունքներով: Համապատասխան գործողություններին նախապատրաստվելու և կատարելագործված ներդրումների կենսական անհրաժեշտություն կա: Անելու շատ բան կա:

2000-2003թթ. կրթության համար կատարվող պետական ծախսերին ուղղված դրական միտումները ասես դադարել են 2004թ.-ին:

| |
|---|
| Ըստ ՀՆԱ տոկոսային հարաբերության՝ ընդհանուր պետական ծախսերը կրթության համար մեծացել են ԵՄ-ում 2000թ. (4.7%) և 2003թ. (5.2%) միջև, սակայն հետո նվազել են 5.1%-ով 2004թ.-ին: Ծախսերի մակարդակները շարունակում են ցույց տալ հսկայական տատանումներ տարբեր երկրներում (Ռումինիայում ՀՆԱ 3.3%-ի և Դենմարկում 8.5%-ի միջև): Ուսումնական հաստատությունների վրա կատարվող մասնավոր ծախսերը, ըստ ՀՆԱ տոկոսային հարաբերության, աննշան մեծացել են 2000թ.-ից ի վեր, բայց գործընթացը դանդաղել է 2004թ.[19]: |

Եթե ԵՄ նշաձողային հատվածները գտել են իրենց որոշակի արտացոլումը ազգային նշանակետերում, ապա ոչ բոլոր երկրներն են սահմանել այսպիսի նշանակետեր[20]:

### 3.2. Առանցքային հմտություններ բոլորի համար

Դպրոցը վաղ լքողները, ավագ միջնակարգային կրթությունը և առանցքային կարողությունները շարունակում են համարվել հիմնախնդիրներ: 2000թ. ի վեր բավարար առաջընթաց չի գրանցվել՝ մինչև 2010թ. հասնելու ԵՄ նշաձողին: Որոշ երկրներում 2000-2006թթ. կատարողականությունը իրականում վատացել է: Մի քանի երկրներ դեռ ունեն դպրոցը վաղ լքողների շատ բարձր ցուցանիշներ (մոտ 20% 2006թ.-ին): Գրաճանաչության ցածր մակարդակ ունեցողների արդյունքները վատացել են կատարելագործվելու փոխարեն:

19 Տե՛ս Հավելված 2-ը
20 Տե՛ս Հավելված 1-ը

Եվրոպան ունի երիտասարդների չափազանց մեծ թվաքանակ, ովքեր վերջացնում են կրթությունը առանց որևէ հմտությունների ձեռքբերման, որոնք անհրաժեշտ են ապահովելու համար նրանց մասնակցությունը գիտելիքահեն հասարակությունում և մղելու նրանց դեպի զբաղվածություն[21]: Նրանք սոցիալական մերժման ռիսկի ենթակա են: Բացի այդ, նրանք իրենց վաղ տարիքում արգելապատնեշ են դնում ցկյանս ուսումնառության առջև:

| |
|---|
| Դպրոցը վաղ ավարտողներ: 18-24տարեկան յուրաքանչյուր վեցերորդ երիտասարդ (15.3%) ԵՄ-27-ում դեռ ավարտում է դպրոցը ոչ ավելին, քան ցածր միջնակարգային կրթությամբ և դրանից հետո չի մասնակցում կրթության և ուսուցման որևէ հատվածին: Գործընթացին նոր թափ պետք է հաղորդել՝ մինչև 2010թ.հասնելու ԵՄ 10%-ի նշաձողին:<br>Ինչ բերաբերում է ավագ միջնակարգային կրթությանը, ապա գրանցվել է դանդաղ, բայց կայուն առաջընթաց: Այն վերելք է ապրել վերջին տարիներին, բայց դա բավարար չէ հասնելու 2010թ. գլխավոր նպատակներից մեկին (22տարեկան երիտասարդների առնվազն 85%-ը ունենա առնվազն ավագ միջնակարգային կրթություն):<br>Եթե ԵՄ նշաձողի համաձայն 15 տարեկան երիտասարդների գրաճանաչության ցածր մակարդակը մինչև 2010թ. ԵՄ-ում պետք է իջներ 20%-ով, համեմատած 2000թ. հետ, ապա այս ցուցանիշը իսկապես մեծացել է 2000 և 2006թթ. միջև[22]: |

Շատ երկրներում վերաբնակիչները և տարբեր մշակութային կարգավիճակներ ունեցող անընդունակ խմբերը նշաձողային հատվածներում ունեն ավելի վատ կատարողականություն[23]: Նրանք արժանի են հատուկ ուշադրության: Վերջիններիս ինտեգրումը նախադպրոցական կրթությանը կխթանի լեզվի ուսուցմանը և կմեծացնի նրանց հեռանկարները արդյունավետ հանրակրթական կրթության ձեռքբերման մեջ:

Պետք է ավարտին հասցնել դպրոցը վաղ լքելու և սոցիալ-տնտեսական խոչընդոտների դեմ ուղղված նախաձեռնությունները: Արտաուսումնապլանային գործողությունները, տեղական գործընկերությունները, ծնողների ավելի ակտիվ ներգրավումը, ծնողների ուսումնառության կարիքներին արձագանքելը և դպրոցում թե՛ սովորողների, թե՛ ուսուցիչների բարեկեցությունը բարելավելը կխթանի այս գործընթացին:

---

21 Հանձնաժողովի Զեկույցը՝ «Օժանդակում երիտասարդների լիարժեք մասնակցությանը կրթությունում, զբաղվածությունում և հասարակությունում», COM (2007) 498

22 Տե՛ս Հավելված 2-ը

23 SEC (2007) 1284, էջ 50, 75

## 3.3 Ուսուցչի կրթություն և ուսուցում

Ոչ մի ուրիշ ներդպրոցական ասպեկտ չի ազդում աշակերտի կատարողականության վրա այնքան, որքան ուսուցչի կրթության որակը[24]:

Դասերի աճող տարասեռությունը, նոր կարողությունների, ինչպես նաև անհատական ուսումնառության կարիքներին առանձնահատուկ ուշադրություն դարձնելու պահանջը ուսուցիչներին և դասընթացավարներին մարտահրավեր է նետում: Դպրոցների մեծացող ինքնավարությունը առաջացնում է նոր խնդիրներ:

Տարեց ուսուցիչների մեծ խմբերը պետք է փոխարինվեն մոտ ապագայում: Մասնագիտությունը պետք է ավելի գրավիչ դառնա:

Սակայն ուսուցիչների կրթության և ուսուցման առկա համակարգերը հաճախ ուսուցիչներին չեն ապահովում այն վերապատրաստումով, որի կարիքը նրանք ունեն: Սա հատկապես այդպես է ուսուցիչների շարունակական վերապատրաստման և մասնագիտական զարգացման համար: Ուսուցիչների ներծառայողական վերապատրաստումը պարտադիր է տասնմեկ անդամ պետություններում:

## 3.4. Բարձրագույն կրթություն՝ գերազանցություն, գործընկերություն և ֆինանսավորում

Երկրները մեծ ուշադրություն են դարձնում ուսումնասիրության և նորարարության ոլորտում համալսարանների դերակատարման մեծացման վրա, և համալսարան-գործարարություն գործընկերությունը դառնում է ավելի ընդհանուր: Այնուամենայնիվ, շատ երկրներ այս առումով անելու դեռ շատ բան ունեն[25]:

Բարձրագույն ուսումնական հաստատություններում բարձր որակի հասնելու համար ձեռնարկվող միջոցները պետք է կենտրոնանան կրթության, հետազոտության և գիտելիքի տեղափոխման վրա: Ներկայումս ուսուցմանը հաճախ ավելի քիչ են անդրադառնում: Առաջարկված Տեխնոլոգիայի և Նորարարության Եվրոպական Ինստիտուտը[26] փոփոխություններ կկատարի կրթության և հետազոտության հաստատություններում՝ դառնալով հենքային մոդել ինտեգրելու կրթությունը, հետազոտությունն ու նորարարությունը:

[24] Հանձնաժողովի Զեկույցը՝ «Ուսուցչի Կրթության Որակի Կատարելագործում»,COM (2007) 392
[25] Այս առումով լավ փորձի օրինակներ կարելի է տեսնել սկանդինավյան երկրներում և ՄԹ-ում
[26] COM (2006) 604 վերջնական/2

Գերմանիայում դաշնային և պետական իշխանությունները մեկնարկել են գերազանցության համար նախաձեռնություն, որը նախատեսում է €1.9 միլիարդ հավելավճար 2006-11թթ. միջև՝ բարձրացնելու վերին մակարդակի հետազոտությունը մրցութային կարգով ընտրված համալսարաններում: Նախաձեռնությունը ներառում է գործողության երեք ուղղություններ՝ հետբուհական կրթություն, խմբեր, որոնք կկապակցեն համալսարանային հետազոտությունը, համալսարանային հավելյալ հետազոտությունը ու ձեռնարկությունները, և համապարփակ ռազմավարություններ վերին մակարդակի հետազոտության համալսարանների համար:

Ներդրումների մեծացումը, ներառյալ մասնավոր աղբյուրներից, դեռ համարվում է մարտահրավեր: Միևնույն ժամանակ պետք է մուտքի անաչառ հնարավորություն ապահովվի դեպի ուսումնասիրության և հետազոտության ծրագրերի լայն բազմազանություն: Որոշ իշխանություններ ունեն ներդրումներին խթանելու այնպիսի գործիքներ, ինչպիսիք են հարկային արտոնությունները[27], պետական-մասնավոր գործընկերությունը կամ հովանավորչական նախագծերը[28], իսկ որոշ իշխանություններ ներմուծել կամ մեծացրել են վարձերի կամ գրանցումների վճարները[29]:

ԵՄ–ում երրորդային ուսումնական հաստատությունների (ներառյալ կրթությունն ու հետազոտությունը) վրա պետական ծախսերը կազմել են ՀՆԱ 1.1% ԵՄ-27-ի համար 2004թ.: Սա տատանվում էր Մալթայում 0.6%-ի, իսկ Դանիայում 2.5%-ի միջև: Սակայն ընդհանուր ծախսի մակարդակը դեռ շատ ցածր է Ամերիկայի Միացյալ Նահանգների մակարդակից: Սա հիմնականում այն պատճառով է, որ ԱՄՆ-ում մասնավոր ֆինանսավորման մակարդակը ավելին, քան յոթ անգամ բարձր է: ԱՄՆ-ում կրթության երրորդային մակարդակ ունեցող ուսանողի վրա ծախսվող գումարը ավելին, քան երկու անգամ ավել էր ԵՄ միջինից[30]:

Չնայած համալսարանների ինքնավարությունը և պատասխանատվությունը մեծացնելու առաջընթաց է գրանցվել, բայց այս մարտահրավերը հաղթահարելու համար համալսարանի անձնակազմին և ղեկավարներին տրամադրվող նվազ աջակցություն է նկատվում:

27 Իսպանիա, Շվեդիա, Սլովենիա, Սլովակիա, Թուրքիա
28 Ավստրիա, Ֆրանսիա, Հունգարիա, Իռլանդիա, Լյուքսեմբուրգ, Լատվիա, ՄԹ
29 Ավստրիա, Գերմանիա, Իռլանդիա, Նիդեռլանդներ, Սլովենիա, ՄԹ, Խորվաթիա
30 SEC (2007) 1284, էջ 67

## 3.5. Մեծահասակների մասնակցությունը ցկյանս ուսումնառությանը

Ցկյանս ուսումնառությանը մեծահասակների մասնակցության ցուցանիշը ԵՄ նշաձողին հասնելու ենթակա չէ: Դեռ մեծ ջանքեր են հարկավոր՝ բարձրացնելու հմտությունների մակարդակները բնակչության հատվածում և աշխատաշուկայում հասնելու ճկունության ու անվտանգության:

| |
|---|
| ԵՄ նշաձողին ուղղված առաջընթացը (12.5%) ուժի մեջ է եղել 2005թ. ի վեր[31]: Սակայն 2006թ.-ին 25-64տ. եվրոպացիների 9.6%-ի միջինն էր մասնակցում կրթության և ուսուցման գործընթացներին, որն ավելի ցածր է, քան 2005թ. ցուցանիշը: Համընդհանուր պատկերը իր մեջ թաքցնում է զգալի անհավասարակշռություն. կրթության բարձր մակարդակ ունեցող մեծահասակների՝ ցկյանս ուսումնառությանը մասնակցելու հավանականությունը վեց անգամ ավելի մեծ է, քան հմտությունների ցածր մակարդակ ունեցողներինը: |

Ցկյանս ուսումնառությանը՝ տարեց աշխատակիցների և հմտությունների ցածր մակարդակ ունեցողների քիչ մասնակցությունը մի առանձնահատուկ խնդիր է, որտեղ մասնակցության ցուցանիշները արդեն իսկ ցածր են համընդհանուր բնակչության համար[32]: Բացի այդ, վերաբնակիչների շարքերում հմտությունների ցածր մակարդակների առանձնահատուկ միտում կա: Աշխատաշուկայի և ազգագրական միտումները կհանգեցնեն հմտությունների բարձր մակարդակի մեծացված պահանջի, իսկ հմտությունների ցածր մակարդակ ունեցող անձինք կունենան ավելի քիչ հնարավորություններ: Մեծ ուշադրություն պետք է դարձնել այս խմբերի ուսուցման վրա:

## 3.6. Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) գրավչություն, որակ և համապատասխանություն

Հետագա աշխատանք պետք է տարվի՝ կատարելագործելու ՄԿՈՒ որակն ու գրավչությունը: Սա Կոպենհագենյան գործընթացի կարևոր գերակայությունն է[33]:

Եթե որոշ երկրներ հաստատել են որակի ապահովման առաջակարգ և համապարփակ համակարգեր[34], ապա ուրիշները գտնվում են դեռ զարգացման փուլում[35]:

31 Սակայն առաջընթացը ուժի մեջ է եղել միայն որպես որոշ երկրների ուսումնասիրության մեթոդաբանությունների մեջ փոփոխությունների արդյունք, որը չափազանցրել է առաջընթացի ծավալները: Տե՛ս Հավելված 2-ը

32 SEC (2007) 1284, էջ 81

33 Մասնագիտական Կրթության և Ուսուցման ոլորտում Եվրոպական ընդլայնված համագործակցության հետագա առաջնահերթությունների վերաբերյալ Խորհրդի Եզրակացությունները: Խորհրդի 2006թ. հոկտեմբերի 30-ի 14474/06 փաստ.

34 Ավստրիա, Գերմանիա, Դանիա, Ֆինլանդիա, Իռլանդիա, Շվեդիա, Նորվեգիա

35 Բուլղարիա, Չեխիայի Հարապետություն, Իսպանիա, Ֆրանսիա, Լյուքսեմբուրգ, Մալթա, Սլովենիա

Ուսուցման ծրագրերում և որակավորումներում ուսումնառության արդյունքների վրա հիմնված մոտեցումների լայն կիրառումը մեծացնում է ՄԿՈՒ համապատասխանությունը աշխատաշուկային: Աշկերտության, դպրոցների և գործարարության միջև համագործակցության, ինչպես նաև աշխատանքի վրա հիմնված ուսումնառության կարևորումը հետագա առավելություն է: Այնուամենայնիվ, փոքր-ինչ առաջընթաց կարելի է գրանցել հմտությունների և որակավորումների կարիքների կանխատեսման գործում:

ՄԿՈՒ-ն երբեմն տուժում է կրթական այլ համակարգերին վատ ինտեգրված լինելու պատճառով: Վերջինս կարող է նպաստել կրթության և ուսուցման ոլորտում ուսումնառության հնարավոր դադարեցման կրճատմանը, որտեղ դպրոցական վաղ մակարդակները ապահովում են ՄԿՈՒ մուտք գործելու առանցքային կարողություններով: Չնայած որոշ անդամ պետություններ[36] ցկյանս ուղղորդումը համարում են հիմնական քաղաքական գերակայություն, բայց առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել մեծահասակների ուղղորդումն ամրապնդելու վրա: Հետագա առաջընթաց նույնպես պետք է տեսանելի լինի ՄԿՈՒ և բարձրագույն կրթության միջև առաջխաղացմանը խանգարող խոչընդոտները կրճատելու գործում:

### 3.7 Վերազգային շարժունություն

Զգալի առաջընթաց է նկատվում Europass-ի իրագործման և կիրառման գործում[37]: Այնուամենայնիվ, սովորողների վերազգային շարժունությանը հնարավորություն են տալիս դեռ հիմնականում ԵՄ ծրագրերը: Ազգային մակարդակով ձեռնարկված քայլերը վերաբերում են բարձրագույն կրթությանը: Հատկապես հիմնախնդիր է համարվում շարժունությունը ՄԿՈՒ ոլորտում:

| |
|---|
| Շարժունությունը պարտադիր է Լյուքսեմբուրգի Համալսարանում: Բակալավրի աստիճանի բոլոր ուսանողները պետք է ուսուցման մի մասը անցկացնեն արտասահմանում: |

36 Ֆրանսիա, Իտալիա

37 Եվրոպական Կառավարության և Խորհրդի 2004թ. դեկտեմբերի 15-ի No 2241/2004/EC որոշումը, OJ L 390, 31.12.2004, էջ 6

## 4. ԴԵՊԻ ԸՆԴԱՌԱՋ

### 4.1. Ցկյանս ուսումնառության իրագործում՝ հասնելու արդյունավետության և անաչառության

Ցկյանս ուսումնառության ռազմավարությունների կապակցվածության և համապարփակության մեջ դեռ առկա են կարևոր թերություններ: Իրագործումը դեռևս համարվում է մարտահրավեր: Որոշ դեպքերում այն նոր է մեկնարկում: Ռազմավարությունների իրագործելիությունը կախված է դրանք՝ քաղաքականությանը կապակցելու քայլերից, իրավասու անձանց՝ ռեսուրսները ըստ նպատակների օգտագործելու, ինչպես նաև պետական հաստատություններին ու շահագրգիռ կողմերին բոլոր մակարդակներով (ուսումնառության գործընկերությունների միջոցով) մոբիլիզացնելու կարողությունից:

*Գիտելիքի բազայի կատարելագործում*

Կրթության և ուսուցման քաղաքականությունների տնտեսական ու սոցիալական ազդեցության մասին գիտելիքը պետք է ամրապնդվի[38]: Ե՛վ արդյունավետությանը, և՛ որակին վերաբերող խնդիրը պետք է կարևորի կրթության և ուսուցման քաղաքականության ու փորձի վերաբերյալ Եվրոպական և ազգային հետազոտական բազայի զարգացումը:

Քաղաքականություն մշակողների և շահագրգիռ կողմերի միջև հավասար ուսումնառությունն ու փորձերի փոխանակումը գիտակության կարևոր աղբյուր են և դրանց պետք է աջակցել: Ցկյանս ուսումնառության ռազմավարությունների մշակման և իրագործման մշտադիտարկումը պետք է շարունակվի՝ մղելով գործընթացը դեպի գնահատման 2010թ. Համատեղ Զեկույցում:

*Տևական ֆինանսավորում*

Ֆինանսավորման մակարդակը, արդյունավետությունը և տևականությունը դեռ համարվում են առանցքային խնդիրներ: Շատ երկրներ փորձարկումներ են կատարում նոր գործիքներով, ինչպես նաև մասնավոր ներդրմանը խթանելու միջոցով: Սա իր մեջ ներառում է անհատներին, ընտանիքի անդամներին և գործատուներին: Այս ջանքերը պետք է մեծացվեն:

*Հմտությունների մակարդակների բարձրացում*

Վաղ կրթության մեջ մեծացված ներդրումների արդյունք են և՛ արդյունավետությունը, և՛ անաչառությունը[39]: Առանցքային կարողությունների վաղ ձեռքբերումը արդյունավետ միջոց է հաստատելու համար հետագա ուսումնառության հիմքը՝ մեծացնելով արդյունքների և

---

38 Տե՛ս SEC (2007) 1098

39 COM (2006) 481, էջ 5

հմտությունների համընդհանուր մակարդակների անաչառությունը: Անցումը դեպի աշխատաշուկա կլինի ավելի հեշտ` խուսափելով հմտությունների թերություններից:

Ինժեներների և գիտության բնագավառի շրջանավարտների շարունակական պահանջ կա: Հետևաբար, ուշադրության կենտրոնում պետք է լինի համալրվելը գիտական և տեխնիկական ուսումնառության մեջ:

Սակայն պետք է ամրապնդել ՄԿՈՒ ընդհանուր պատկերը, կարգավիճակն ու գրավչությունը: Նախնական ՄԿՈՒ մուտք գործելու հեշտացման, շարժունության և կրթական համակարգ վերադառնալու ճկուն և մոդուլային համակարգեր պետք է մշակվեն: Ինտեգրացված ցկյանս ուղղորդման համակարգերը պետք է լինեն մատչելի բոլոր քաղաքացիների համար: Առանձնահատուկ ուշադրություն է պահանջվում մեծահասակների ուսումնառության վրա:

*Արձագանքում սոցիալ-տնտեսական անբարենպաստ վիճակին*

Կրթությունն ու ուսուցումը կարող են նպաստել` հաղթահարելու սոցիալ-տնտեսական ճգնաժամը: Բայց դրանք կարող են նաև հավերժացնել վերջինիս: Կրթության և ուսուցման մեջ անհավասարությունը կարող է դառնալ հսկայական ծախսերի արդյունք: Այս երևույթը հաճախ թաքնված է, բայց ոչ հեռու իրականություն լինելուց: Ուստի, մուտքի հնարավորության, մասնակցության, գործածման և արդյունքների անաչառության ապահովումը պետք է համարվի գերակայություն:

*Վերաբնակիչների պոտենցիալի օգտագործում*

Եվրոպական համայնքների մեծացող բազմազանությունը իր հերթին ստեղծում է լրացուցիչ մարտահրավերներ կրթության և ուսուցման ապահովման համար: Վերաբնակիչների կատարողականության մակարդակները, մասնակցության և ծեռքբերումների ցուցանիշները միջինից ավելի ցածր են: Չնայած այնպիսի գործոնները, ինչպիսիք են սոցիալ-տնտեսական կարգավիճակը և լեզուն, ինչ-որ չափով արդարացնում են այս հանգամանքը, բայց ակնհայտ է նաև այն փաստը, որ կրթության և ուսուցման քաղաքականություններն ու համակարգերը չեն արձագանքում այս մարտահրավերներին և իրենք իրենց հերթին նպաստում են այդ խնդրին[40]: Տվյալ իրավիճակը արժանի է հատուկ ուշադրության` խթանելու վերաբնակիչների տնտեսական և սոցիալական ներգրավմանը, ինչպես նաև միջմշակութային երկխոսությանը:

[40] SEC (2007) 1284, էջ 51

*Բարձր որակի դասավանդում*

Ուսուցիչները մասնագիտական ավելի լավ վերապատրաստման և շարունակական զարգացման կարիք ունեն: Սա կկատարելագործի կրթության և ուսուցման արդյունքները: Ուսուցիչների և դասընթացավարների ներգրավումը նորարարության և բարեփոխումների մեջ ևս շատ կարևոր է: Հանձնաժողովը սահմանել է մարտահրավերներ[41]: Այն նաև իրականացնում է հասարակական խորհրդատվություն դպրոցների վերաբերյալ[42]: Աշխատանքային ծրագիրը առաջարկում է մարտահրավերներին արձագանքելու համապատասխան համատեքստ:

## 4.2. Նորարարություն և ստեղծարարություն. կրթությունը որպես գիտելիքային եռանկյունու գլխավոր տարր

Կրթությունը գիտելիքային եռանկյունու հիմնային տարրն է, որը, այսպիսով, խթանում է աշխատանքներին և աճին: Համալսարանները եռանկյունու հիմքն են կազմում: Գերազանցության օջախները, որոնք կենտրոնանում են դասավանդման, հետազոտության և գիտելիքի փոխանցման վրա, ունեն կենսական անհրաժեշտություն: Ավելի շատ ուժ պետք է ներդնել՝ հնարավորություն տալու, որ բարձրագույն կրթությունն ու գործարարությունը աշխատեն գործընկերության հիման վրա:

Հետազոտությունն ու նորարարությունը բնակչության շրջանում հմտությունների լայն բազայի կարիք ունեն: Գերազանցությունը և առանցքային կարողությունները, մասնավորապես նրանք, որոնք կապ ունեն ձեռներեցության հետ, ստեղծարարությունը և սովորելու համար սովորելը պետք է զարգանան կրթության և ուսուցման բոլոր համակարգերում և մակարդակներում: Ե՛վ դպրոցները, և՛ ՄԿՈՒ-ն նորարարությանը խթանելու ամենամեծ կրողն են: Օրինակ բարձրորակ ՄԿՈՒ-ն կարող է նպաստել նորարարությանը աշխատավայրում:

## 4.3. Կատարելագործված ղեկավարում. «Կրթություն և Ուսուցում 2010»-ի արդյունքների լավագույն կիրառում

Աշխատանքային ծրագիրը ցույց է տալիս արդյունքներ Եվրոպական և ազգային մակարդակներով: Եվրոպական հենքային գործիքների մշակումը, խմբերի աշխատանքը և հավասար ուսումնառության գործընթացները աջակցում են երկրների բարեփոխումներին: Կրթության և ուսուցման մարտահրավերները և մարդկային կապիտալի զարգացումը իրենց բացահայտ արտահայտությունն են գտնում անդամ երկրների մեծ մասի Լիսաբոնի Ազգային Բարեփոխումների Ծրագրերում:

---

41 Հանձնաժողովի Զեկույցը՝ «Ուսուցչի Կրթության Որակի Կատարելագործում», COM (2007) 392

42 SEC (2007) 1009, «Դպրոցներ 21րդ դարի համար»

Կրթության և ուսուցման ոլորտում համակարգման բաց մեթոդի արդյունավետությունը, վերջինիս ազդեցությունը և քաղաքական սեփականության իրավունքը կարելի է դեռ ամրապնդել: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել հետևյալ հատվածներին թե՛ ազգային, թե՛ եվրոպական մակարդակներով.

- ցկյանս ուսումնառության հեռանկարում կրթության և ուսուցման համատեղ քաղաքականություն ամբողջ համակարգի համար սահմանված ռազմավարական գերակայություններով,
- համապատասխան այնպիսի քաղաքականության հատվածների հետ շփման եզրերի կատարելագործում, ինչպիսիք են նորարարության, զբաղվածության և սոցիալական քաղաքականությունները, ձեռներեցությունը, հետազոտությունն ու կառուցվածքային ֆինանսավորումը,
- քաղաքականության մշակումների ինտեգրում բարձրագույն կրթության, ՄԿՈՒ և մեծահասակների ուսումնառության բնագավառներին համընդհանուր աշխատանքային ծրագրում,
- սերտ կապեր Լիսաբոնի ինտեգրացված ուղենիշների իրագործման և զարգացման ու Կրթություն և Ուսուցում 2010 աշխատանքային ծրագրի միջև, ինչպես նաև Լիսաբոնի ռազմավարությունում ցկյանս ուսումնառության ավելի մեծ տեսանելիություն,
- անհատ երկրների միջև զարգացումների կամավոր հիմքի վրա կառուցված երկկողմանի մշտադիտարկում հավասար ուսումնառության կամ հավասար վերանայման միջոցով,
- երաշխավորում, որ հավասար ուսումնառության գործընթացների արդյունքները հասու են քաղաքականություն մշակողներին և նախարարներին,
- քաղաքացիական հասարակության ավելի ակտիվ մասնակցություն,
- ցուցիչների և նշաձողերի հետագա զարգացում՝ համաձայն Խորհրդի 2007թ. մայիսի եզրակացությունների,
- համայնքային ֆինանսավորման և ծրագրերի մեծ մասի, մասնավորապես նոր Ցկյանս Ուսումնառության Ծրագիր 2007-2013թթ. և ԵՄ կիրառում որպես կապակցման քաղաքականության գործիքներ:

Երաշխավերելու համար, որ Կրթություն և Ուսուցում 2010 աշխատանքային ծրագրի համաձայնեցված գերակայությունները լիարժեքորեն արտահայտված են ազգային քաղաքականության մշակման մեջ, 2006թ. Համատեղ Զեկույցում որոշարկված հատուկ գործողություններին հետամուտ պետք է լինել:

Կրթություն և Ուսուցում 2010 աշխատանքային ծրագրի և ցկյանս ուսումնառության ռազմավարությունների իրագործման համար մեխանիզմներ պետք է ստեղծվեն: Անհրաժեշտ է սերտ համագործակցություն այն մարդկանց հետ, ովքեր պատասխանատու են սոցիալ-տնտեսական լայն քաղաքականության համար (հատկապես սոցիալական ներգրավման վերաբերյալ Լիսաբոնի բարեփոխումներն ու ազգային ռազմավարությունները):

Ազգային նշանակետերն ու ցուցիչները պետք է հետագայում մշակվեն: Վերջիններս պետք է ի նկատի ունենան Եվրոպական նպատակները և նշաձողերը: Քաղաքականությունն ու փորձը պետք է ձեռք բերվեն գիտելիքի և գնահատման կիրառման միջոցով: Եվրոպական մակարդակով համաձայնեցված ընդհանուր սկզբունքները, ուղենիշներն ու առաջարկությունները առաջարկում են հիմքային կետեր ազգային բարեփոխումների նախագծման համար:

### 4.4. Նախապատրաստություն հետգործընթացային ժամանակաշրջանի համար (2010թ.-ից հետո)

Կրթություն և ուսուցում աշխատանքային ծրագիրը անդամ պետությունների կրթության և ուսուցման բարեփոխումներին ապահովում է գործնական աջակցությամբ: 2002թ. ծրագրի մեկնարկումից ի վեր էական առաջընթաց է գրանցվել: Դեռ ժամանակ է պետք կրթության և ուսուցման բարեփոխումների արդյունքները տեսնելու համար: Գլխավոր մարտահրավերները շարունակում են գոյություն ունենալ, իսկ նոր մարտահրավերները հրատապ են դառնում: Այս աշխատանքը, ներառյալ Բոլոնիայի ու Կոպենհագենի գործընթացների շրջանակում համագործակցությունը, պետք է շարունակել և, անշուշտ, ավելի արդյունավետ դարձնել: Յետևաբար, կրթության և ուսուցման ոլորտում Եվրոպական համագործակցության կատարելագործված ռազմավարական շրջանակի վերաբերյալ աշխատանքները պետք է այժմ սկսել: Քանի որ Աշխատանքների և Աճի Ռազմավարության համար կրթության և ուսուցման դերակատարությունը առանցքային է, ապա այն պետք է սերտորեն զուգորդվի Լիսաբոնի գործընթացի հետագա զարգացմամբ:

## ՀԱՎԵԼՎԱԾ 1

Երկրների կարգավիճակը ըստ նշածողային հատվածներում ցկյանս ուսումնառության ճշգրիտ ռազմավարության, որակավորումների շրջանակի ընդունման, ոչ ֆորմալ/ինֆորմալ ուսումնառության և ազգային նշանակետերի վավերացման

Ն = Երկիրն ունի առկա ռազմավարություն, շրջանակ, վավերացման համակարգ կամ ազգային նշանակետեր

Մ = Երկիրն ունի մշակվող ռազմավարություն, շրջանակ կամ վավերացման համակարգ

Չ = Երկիրը չունի շրջանակ, վավերացման համակարգ կամ ազգային նշանակետեր

Ք = Երկիրն ունի առկա ցկյանս ուսումնառության քաղաքականություններ, բայց ոչ ճշգրիտ ռազմավարություն

| Երկրներ | Ցկյանս Ուսումնա-ռության ճշգրիտ Ռազմավարություններ | Որակավորումների Ազգային Շրջանակներ | Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացման համակարգ | ԵՄ բոլոր կամ որոշ նշածողային հատվածներում սահմանված ազգային նշանակետեր |
|---|---|---|---|---|
| Ավստրիա | Ն | Մ | Մ | Չ |
| Բելգիա ֆր | Ն | Մ | Ն | Ն |
| Բելգիա նիդ | Ն | Մ | Ն | Ն |
| Բուլղարիա | Մ | Մ | Մ | Չ |
| Կիպրոս | Ն | Չ | Մ | Ն |
| Չեխիա | Ն | Մ | Մ | Չ |
| Գերմանիա | Ն | Մ | Չ | Չ |
